Հայոց լեզվի և /հայ/ գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գրիգոր Նարեկացին և Աղոթամատյանը

Կատարող՝ Սուսաննա Սիմոնյան

Դպրոց Մ. Սարյանի անվ. հ. 86 հիմն. դպրոց

Առարկա Գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան Հ. 65 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ» ՊՈԵՄԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գրականության պատմությունը նման է լեռնապարի. Որքան հեռանում ենք այս ու այն բլուրից կամ սարից, նույնքան փոքրանում են դրանք: Սա, դժբախտաբար, ընդհանուր կարգ է: Իսկ արտակարգերը սակավ են այնքան, որ յուրաքանչյուր ժողովրդի մեկ հատ էլ չի ընկնում: Մենք, իբրև ժողովուրդ, մեզ կարող ենք բախտավոր համարել, որովհետև ունենք այդպիսի մեկը՝անունը՝Գրիգոր Նարեկացի:

Նա նման չէ նույնիսկ... Արարատին, որ հեռավորության ու միջոցի մեջ նույնպես փոքրանում է: Նա նման է... հորիզոնի. Որքան հեռանում ես իրենից, նույնքան մոտենում է ինքը, և ինչքան մոտենում ես իրեն,այնքան հեռանում է նա՝ մնալով միշտ անհաս և անմատույց, երբեք չփոքրացող և միշտ բացարձակվող: Ուստիև իր հանդեպ մշտարծարծվող մեր զգացմունքը հար և նման է իր իսկ զգացմունքին առ Աստված. «ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԵՄ ՈՒ ՉԵՄ ՀԱՍՆՈՒՄ»: Պարույր Սևակ

Հովհաննես Թումանյանն ասել է, թե հանճարը ՝ Նարեկացին, կարողացել է խոսել մարդկային սրտի ամենանուրբ, նվիրական զգացմունքներից և կարողացել է ապաշխարողի կերպարանքով գլուխ բարձրացնել մինչև երկինք և խոսել Աստծո հետ երես առ երես: Մենք, ականջալուր Նարեկացու բորբոքուն սրտի խորքից բխած խոսքին, ապրենք նրա նախանշած ճանապարհով: Սերունդներին կրթել , դաստիարակել սեփական օրինակով, նրանց տանել բարձր արժեքներ ստեղծող, բացահայտող ուղիներով: Աղոթամատյանը բաց դասագիրք է բոլորիս սեղանին՝ արդարության, ազնվության, մաքրագործման դարբնոց: Հնարավորինս ուսումնասիրել հայ ժողովրդի մեջ լայնորեն տարածված ,, Նարեկը՞ , ըմբռնել նրա տիեզերական արժեքը,գնահատել, հպարտանալ այն դպրոցով, որ նարեկացյան է, որի արժնավոր սաներն են Թումանյանն ու Տերյանը, Չարենցն ու Սևակը, Իսահակյանն ու Շիրազը, Դավթյանն ու Սահյանը... Երկյուղածորեն եմ մոտենում թեմային.ուզում եմ զգալ նրա , կախարդանքը, խորախորհուրդ միտքը, խոսքի ուժը, անպարփակ հմայքը:

Մեկ հազարամյակից ավելի է անցել այն ժամանակից, երբ խորիմաց գիտնական, հմուտ հոգեբան, փիլիսոփա և բանաստեղծ Գրիգոր Նարեկացին Նարեկա վանքի իր համեստ խցում՝ ճրագի աղոտ լույսի տակ, «այս երկրում ապրող ամեն բանականների համար անխտիր», իր տառապանքներով լի հոգու ապրումները բանաստեղծական տողերի մեջ շաղախելով, հյուսեց ողբաձեծ աղոթքների մատյանը:

«Աշխարհում ցրված բազմասփյուռ բոլոր քրիստոնյաների… մեղավորների և արդարների, բարձրահոն ինքնամեծարի և իր սխալն ընդունող անձնադատի, բարիների և եղեռնագործների, նկունների և արիների, միջակների և պայազատների,
Որոնցից ոմանց՝ աղերս-աղաչանք և ոմանց՝ բարի խրատներ
Հորինեցի ես աղոթքի համար՝ այս մատենիկով,
Որ հոգուդ գոյությամբ եմ ձեռնարկել,
Գրի առնելով մաղթանքներ պես-պես,
Որպեսզի խնդրանքներն այս բոլորի
սրանով ընդմիշտ քո մեծ գթությանը ներկայացվեն…»:

Նարեկը մեզ ներկայացնում է Աստծուց հեռացած մարդկային կյանքի ողբերգությունը և խոր ապաշխարության միջոցով Աստծուն միանալու ճանապարհը:

Գիրքը երկխոսություն է երկնավոր Հոր հետ, գրքում չկան քարացած ուպահպանողական պատկերացումներ, այն մի հզորաշունչ աղոթք է, որը խոստովանության ձևով բխում է Նարեկացու հոգուց, Նարեկացու սրտից: Խոստովանություն է գործած ու չգործած մեղքերի համար, և այդ խոստովանության մեջ մարդկության բազմաձայն խոստովանության շունչը կա, և այդ ամենը վեհի, կատարյալի ու հավերժ մեղապարտ հոգու մեջ եղած բոլոր պատնեշների խորտակումով, բայց հեռավորության պահպանմամբ, ինչը և ձգտում է հավերժական ձգտման զգացողություն: Գիրքը ցույց է տալիս աղոթքի և ընդհանրապես հոգևոր կյանքի նշանակությունը մարդու կյանքում, այն հնարավորություն է տալիս Աստծո հետ հաղորդակցվել ոչ թե անորոշության մեջ, այլ մեր մեջ, մեր ներաշխարհում, մեր հոգու տաճարում:

«Մատյան ողբերգության»-ը ոչ միայն աղոթամատյան է, այլ տաղաչափական բարձրարժեքությամբ գեղարվեստական հանճարեղ գործ:

Ժամանակները սուրում են մեկ ակնթարթի պես, բայց հազար տարին սերունդների համար սուրացող ակնթարթ չէ. այն կարող է կերպարանափոխել մարդկային հասարակությունն ու նրա ողջ կենսակերպը, նոր կերպարանք տալ աշխարհին, ջնջել ու նորից վերածնել քաղաքակրթություններ, կարող է շրջել բովանդակ պատմության ընթացքը, բայց, այդուհանդերձ, մեկ հազարամյակ ու նույնիսկ բյուր տարին չեն կարող վերակերտել մարդու ներաշխարհը, որը դատապարտված է հավերժական երկվության՝ չարի ու բարու, մեղքի ու ապաշխարանքի, անկումի ու կատարյալը բաղձալու հակասական հակումներով: Հենց այս հակասության մասին տառապյալի մտորումներն էին ծնունդ տվել աղոթաշունչ տողերին, որ գիշերվա լռության մեջ մրմնջում էր Գրիգորը ու հանձնում դրանք մագաղաթին: Եվ այդ տողերը արդիական են մինչև օրս և միտված են հավերժության, քանի կա և կլինի մոլորակի վրա մարդ արարածը:

«ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ» ՊՈԵՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Նարեկացու «Մատյան»-ը մեր բանաստեղծության ամենածավալուն երկն է: Եվ նրա մշտախայտանք ալեբախությանը համեմատելու համար մեր հայրենի բնությունը օրինակ չի տալիս. Բաղդատության համար հարմար չի գալիս ո՛չ Վանա ծովակը, ո՛չ էլ Սևանա լիճը. ծով է պետք, որ չենք ունեցել, ու եթե ունենք,հենց այս «Մատյանն» է»: Պարույր Սևակ

Առանց երկմտանքի և վարանելու Նարեկացուն պետք է համարել բացարձակ հանճար, մեկն այն եզակիներից, ովքեր համամարդկային քաղաքակրթության պատմության մեջ իրենց հայտնությամբ նշանավորել են ոչ թե դարը, այլ մարդկության ամբողջ ներկայությունն Աստծո ստեղծած այս աշխարհի վրա:

“Մատյան ողբերգության” պոեմը հայ գրականության գլուխգործոցն է և, ընդհանրապես, համաշխարհային գրականության գլուխգործոցներից մեկը, անփոխարինելի արժեք: Այն կեցության՝ կյանքի գիրք է, այն հնարավորություն է տալիս յուրաքանչյուրիս ներանձնանալու, նայելու ինքն իրեն, տեսնելու ինքն իրեն, հնարավորություն է տալիս բոցավառվելու աստվածային լույսով: Մարդը սկսում է փոխվել, տեսնում է իր անկատարությունը և ձգտում է հասնել Բարձրյալին: Ու այդ փոփոխության մեջ մարդը իմաստավորվում է. ինքնահաղթահարման ճանապարհին հասնում է ճշմարտության:

Այս գիրքն իմ ձայնով անձիս փոխարեն
Իբրև ես՝պիտի միշտ աղաղակի,
Տարածի այն, ինչ ծածկված է եղել,
Ինչ որ զաղտնի էր, պիտի հռչակի,
Կատարածներս կականի ողբով,
Մոռացվածները բերի ասպարեզ,
Ինչ որ եղել է անտեսանելի ու աներևույթ,
Մերկացնելով դուրս հանի հանդես,
Բարուրանքներս պիտի տարփողի,
Հրապարակի՝ ինչ որ թաղված է եղել խորքերում,
Մեղքերս պատմի, թաքնվածները
Ցուցադրի բուն կերպարանքով:
Սրանով պիտի խայծերն ի հայտ գան,
Որոգայթներն ու կարթերը բացվեն,

Երևան հանվեն անպատումները,
Չարիքների ողջ մնացորդները լիովին քամվեն:

Կյանքի ալիքների միջով խռովահույզ հոգին մարմնի նավակով հասնում է կյանքի նավահանգիստը: Շարժումն այդ քառսում սկսվում է մի ինչ-որ չորոշարկված կետից՝ «ի խորոց սրտից», որտեղից հույզերը, մտքերն ու բառերն ուղղվում են առ Աստված, հասնում որոշարկման: Բանաստեղծը կարողանում է քնարական պատումի տեղապտույտներին այնպիսի տարբերականություն տալ, որ դրանից առաջանում է նաև հզոր հոսանք, ներքին շարժում, գլուխների մեջ անցում մեկից մյուսին: Իննսունհինգ գլուխներն այն հանգրվան-աստիճաններն են, որոնցով քնարական հերոսն անցնում է երկրային ոլորտից դեպի երկնայինը: Ծովային անհայտ ու անմշակ ընդերքից, անհայտ շրջակա տարածությունից նա հասնում է աղոտ ձևեր առնող մի նոր իրականություն՝ լույսով ու երկնային ցողով թաթախված: «Աստվածաշնչում” ծովը կյանքի խորհրդանիշն է գրեթե բոլոր առումներով, իսկ ջուրը՝այն փորձությունների ու վտանգների, որ հետապնդում են մարդուն: Պոեմի քնարական հերոսը մշտաթռիչ մի գոյ է, որը մտքի ճախրանքով հասնում է ամենուր: Մտքի այս անսովոր շարժումները նրան օժտում են անսահմանազատությամբ: Բանաստեղծը չի միջամտում չկաշկանդելու համար, այլ արձակում է բոլոր սանձերը, որպեսզի տարերքի մեջ դրանք իրենց զարգացման բարձրակետին հասնեն: Սրանով նա հնարավորություն է ստանում անսահմանի սահմանները գծելու, անտեսանելին տեսանելի, անհասանելին հասանելի դարձնելու:

Աստված Նարեկացու համար կատարելության իդեալն է, հեղինակը ձգտում է հասնել Աստծուն և իր մարդկային բնությունը կատարելապես խառնել ու միացնել Նրա էությանը, և դեռ ավելին՝ նա գտնում է, որ մարդը կարող է նույնիսկ Աստված լինել:

Եվ այն, ինչ ասելն ահավոր է, գրում եմ այստեղ
Ես ի հիշատակ երախտիքիդ,
Կարող ենք լինել մենք Աստված նույնիսկ
Շնորհներով ընտիր:

Աստվածայինը, լուսավորը տրված է ի սկզբանե, կարիքը պարտադրված է կյանքի կողմից: Այդ ամենը հաղթահարելի է, երբ մարդը դիմում է Աստծուն: Բայց երբ մարմնի չափավոր պահանջմունքները փոխակերպվում են անզուսպ կրքերի, անհնար է դառնում կյանքի խաղաղ ընթացքը: Դրանք հեռացնում են մարդուն երկնքից և զցում նրան հակոտնյայի իշխանության տակ, պատճառ դառնում իրական և խորհրդապաշտական մահվան: Կամուրջ աստիճանի վրա թողնելով իր մեղքերը՝ քնարական հերոսը հասնում է երկինք: Մատյանի յուրաքանչյուր գլուխը կամրջի մեկ աստիճանն է: Հասնելով երկնքի

դարպասներին՝ նա մի անհրաժեշտ արարողություն էլ է կատարում՝ օծելով մարմինը: Դա հոգու վերածնության պարտադիր նախապայման է:

Ընդունելով աշխարհի ներդաշնակությունը՝ Գրիգոր Նարեկացին գոյաբանության իր արժեքային համակարգը ներկայացնում է երկվության սկզբունքով՝ նյութական և ոգեղեն, և որոնում է երկվության հաշտեցման եզրեր Աստծու կողմից արարված ամենակատարյալ էակի՝ մարդու ներաշխարհում: Դա էլ պայմանավորում է նրա գոյաբանության արժեքային համակարգի իրատեսության սոցիալ-հոգեբանական բնույթը: Այս միջոցով էլ հեղինակը մարդու կեսագործունեության կազմակերպման, հավատի, սիրո, հույսի գոյակարգ է մշակել՝ նրան կողմնորոշելով դեպի համակեցություն և ինքնաճանաչում:

Հավատի միջոցով է մարդը ինքնահաստատվում և ինքնաիրացվում որպես մտածող և մադասեր գոյ: Կյանքի բանական խաղը ճիշտ հասկանալով էլ մարդն իր հավատով կարողանում է վեհացնել իրեն: Հավատի շենքը կառուցելիս Գրիգոր Նարեկացին նրա հիմքում դնում է սիրո և հույսի փիլիսոփայությունը: Նա բարձրացնում և վեհացնում է մարդուն՝ համոզված, որ նյութը չի առաջնայինը, և «Ես»-ը ինքնահաստատվում է միայն այն դեպքում, երբ խորապես կարևորում է իր հավատի իրատես, բանական սկիզբը:

Գրիգոր Նարեկացին դիտարկում և քննության է առնում մարդու հիմնախնդիրը ոչ միայն իբրև տիեզերաստեղծ, այլև դրան միահյուսված, մարդասիրությամբ պայմանավորված տիեզերապահպանման ելակետով: Մարդասիրությունը համարելով գոյաբանական առումով միակ մնայուն արժեք՝ Գրիգոր Նարեկացին ներկայացնում է մարդու հավաքական «Ես»-ի կերտման առանձնահատկությունները: Հիմք ընդունելով նեոպլատոնականության ճանաչողական աշխարհահամակարգը՝ Գրիգոր Նարեկացին ստեղծել է մարդու գոյաբանության տեսություն, որի հիմնական եզրույթը մարդու կողմից այլընտրանքային ինքնադրսևորումն է՝ մարդ-Աստված, մարդ-մարդ, մարդ-բնություն եռամիասնության մեջ:

Գրիգոր Նարեկացին Մատյանում իր աշխարհաճանաչողության մանրակերտը կառուցակարգել է՝ պայմանավորված իր ժամանակի հայ մարդու կենսակերպով և իրականությամբ: Հենց այս հանգամանքով է բացատրվում, որ միջնադարում այդքան շատ ընդօրինակել են Գրիգոր Նարեկացուն, քանի որ անխուսափելի պահանջ էր զգացվում նրա առաջադրած գաղափարների, նրա կողմից մշակված գոյաբանական գործոնների հիմքի վրա իրականացնելու հայ տեսակի գոյության անվտանգ կեցությունը:

Տիրոջ հանդեպ Գրիգոր Նարեկացու սերը կույր չէ: Նա վստահ է, որ Արարիչ-մարդ հաղորդակցության մեջ մարդուն փորձության տանող և փորձությունից մաքրված, նորացած դուրս գալու պարագան է, որ ամրապնդում, աներեր ու անվարան, հավերժ ու անկոտրում է դարձնում իր սերը Բարձրյալի նկատմամբ: Գրիգոր Նարեկացին բնորոշում է որպես

«խորապես մարդկային» և «քրիստոնյա մարդասիրության արտահայտություն»: Մեծ մարդաբանը փորձում է զուգամիտել «Ես»-ի նյութական, ոգեղեն և զգայական եզրերը, քանի որ առանց դրանց միաձուլման անհնար է մարդու վերաբերմունքը ճշտել գոյաբանական արժեքների բազմաչափության հանդեպ:

Աշխարհն ընկալելով հարաբերական միասնության մեջ՝ Գրիգոր Նարեկացին հատկապես կարևորում է հայ մարդու ինքնակատարելագործման գործընթացի ցանկությունն ու հնարավորությունը: Իսկ եթե ինքնակատարելագործման նման արժեհամակարգը շրջապատի կողմից չկարևորվի, ապա ակնհայտ կդառնա տեսակների աններդաշնակ ընկալման հակասությունը: Նարեկացին, առաջնորդվելով հանդուրժողականության կարգախոսով, մարդուն կոչ է անում ճանաչել իր նմաններին և ներողամիտ վերաբերվել նրանց չիմացության հանդեպ: Սա է Նարեկացու աշխարհաքաղաքացի մարդու արժեհամակարգի կերտման փիլիսոփայական, մարդասիրական առանցքը, որը հնարավորություն է տալիս մարդուն և՛սոցիալական, և՛ազգային հիմնախնդիրներից վեր դիտարկել:

Գր. Նարեկացին՝ ժամանակի փայլուն կրթություն ստացած փիլիսոփան, քաղաքագետը, անտիկ և քրիստոնյա բնագրերի զուգամիտման օգնությամբ ուսումնասիրում է Մարդուն՝ մի նոր աստիճանի բարձրացնելով նեոպլատոնականությունը: Վերջինիս ամենաճանաչված ներկայացուցիչ Պլոտինիոսի մոտեցումները առկա են Նարեկացու ճանաչողության հայեցակարգում: Ինչպես հավաստում է պատմաբան Ա. Ստեփանյանը, «Մարդ էակը, համաձայն Պլոտինիոսի, համադրական բարդ կառույց է՝ բաղկացած երկու ներհակ բաղադրիչներից: Դրանցից մեկը՝ հոգեղենացած մարմինը կամ մարմնացած հոգին, արդյունք է հոգու ցանկական հատվածի և նյութի մերձեցման: Այն ապրում է առօրեական (կամ հասարակ) կյանքով՝ տրված մարմնական հաճույքներին ու տառապանքներին: Մյուս բաղադրիչը նույնական է հոգու բանական հատվածին, «…որը վեր է մարմնից և որին պատկանում են վերընթաց շարժումը, գեղեցիկն ու աստվածայինը»: Նա մեր հոգեմտավոր բարեկեցության աղբյուրն է:

Մարդկային կյանքի գերագույն իմաստն ինքնակատարելագործման ճիգով աստվածակերպ դառնալն է: Ըստ որում՝ այդ գործընթացը կայանում է մարդու բարոյական առաքինությունների ձևավորման ճանապարհով, «…որպեսզի ամեն ոք ենթարկվի իր կառավարող սկզբին, ինչպես զինվորը հրամանատարին»:

Անտարակույս, «կառավարող սկիզբը» բանական հատվածն է, որին պետք է ենթարկվի մարմնականը: Այլ խոսքով՝ Պլոտինիոսը մարդ էակին դիտարկում է իբրև ենթարկելու և ենթարկվելու հարաբերությունների ամբողջություն:

Զուգամիտելով գոյակարգի հիմքը կազմող արժեքները՝ Նարեկացին մշակում է մարդու մասին իր հայեցակարգը՝ ցանկանալով ինքնակառավարման գերակայության միջոցով միավորել անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ հայի «ես»-երի ճանաչողության եզրերը:

Ճանաչողությունն իր բազմաչափ բնույթով ամբողջանում է անտիկ և քրիստոնեական բնագրերով, որոնք էլ Նարեկացու ճանաչողության հայեցակարգին համատիեզերական մտայնություն են ներարկում: Այս հենքի վրա էլ գրողը ուսումնասիրում է մարդուն՝ ներկայացնելով ինչպես Աստվածային լույսի, բարության, արարման, հավատի, սիրո, հույսի, այնպես էլ սատանայական խավարի, չարության, ավերչության, անհավատության, ատելության, հիասթափության և մերժման տիրույթներում:

Նարեկացին բարդ աշխարհաքաղաքական իրականության մեջ ապրող հայ մտավորական է, որը, քաղաքական ժամանակի հրամայականով պայմանավորված, փորձում է պատասխան գտնել, թե ինչպես հարաբերվել Բարձրյալի և մարդարարածի հետ՝ փոխակերպվելով ժամանակի բանականության պահանջներին համապատասխան: Այս գործընթացում մարդը, որպես ինքնահաստատված «ես», պետք է կարևորի իր ներկայության պատասխանատվությունը սերունդների առջև՝ նրանց թողնելով հավատը, հույսը, սերը՝ որպես ճանաչողության իսկության դիտարկման միջոց: Նարեկացին իր ճանաչողության արժեքային համակարգը խարսխում է

ա) Ճանաչի՛ր ինքդ քեզ,

բ) Պահպանի՛ր համակեցության կանոնները,

գ) Երջանիկ է նա, ով երևույթների միջև եղած կապն է հասկանում սկզբունքների վրա:

Այս եռաչափ ճանաչողական հայեցակարգը գրողին հնարավորություն է տվել հարահոս ժամանակի և տարածության մեջ քննել հավաքական մարդու ինքնակառավարման կերպարային «ես»-երի դրսևորումները: Տարաբնույթ ժամանակների և տարածական հարթությունների միջև էլ ընթանում է մարդու «ես»-ի ճանաչողության պարուրաձև զարգացումը: Այս պարագայում էլ «ես»-երի ինքնադրսևորումը համադրվում է Աստծո հետ երկխոսության և բանավեճի միջոցով ճշտելով մարդու տեղն ու դերը Աստծո կողմից արարված բնության մեջ, քանի որ յուրաքանչյուրն իր գոյաբանական առանձնահատկություններով է ներդաշնակվում համատիեզերականին:

Նարեկացին Մատյանում իր ճանաչողության հայեցակարգը կառուցել է՝ ամբարելով անտիկ շրջանից ինքնակառավարման մասին մշակված սկզբունքները: Հենվելով դրանց վրա էլ Նարեկացին ճանաչողությունը դիտարկում է որպես բազմակի երևույթ՝ այն ամբողջացնելով բազմաչափ սիրո փիլիսոփայությամբ, այսինքն՝ սերը նրա Մատյանում քննարկվում և զուգամիտվում է և՛ Արարչի, և՛ մարդկանց, և՛ իրականության ու բնության

նկատմամբ: Բազմաչափ սիրո այս զուգամիտումներն էլ հիմք են տալիս Նարեկացուն համարել կենսասիրության և համակեցության փիլիսոփա. որպես այդպիսին նա մի նոր աստիճանի բարձրացրեց ճանաչողության հայեցակարգը՝ հնարավորություն տալով ինքնակառավարվել հավատով, հույսով և սիրով:

Մարդը պետք է ընդունի հոգևորը, միտքը, գաղափարը՝ նմանվելով արարիչ Աստծուն, քանի որ նյութական աշխարհը փոփոխական է, սակայն իմաստազուրկ չէ, և, անուհանդերձ, չի կարելի գերի լինել ինչքին: Ընդունելով աշխարհը հարաբերական ամբողջության մեջ՝ Նարեկացու ասկետիզմը ներկայանում է երկու հիմքով՝ նյութական և ոգեղեն, որոնց օգնությամբ գրողը փորձում է երկվության հաշտեցման եզրերը տեսնել Աստծու արարած ամենակատարյալ էակի՝ մարդու հոգում:

Միջնադարյան պայմաններում մահկանացուի համար, իրոք, ահավոր էր անգամ այդպիսի պատկերացում ունենալը՝ մի բան, որ դուրս էր եկեղեցական դոգմաների շրջանակներից, բայց Նարեկացու հումանիզմը խիզախում է մարդուն հասցնել մինչև այդ բարձունքները: Եվ ահա սկիզբ են առնում բանաստեղծի ողբերգական ապրումները և տարակույսները. իսկ ինքը կարող է միանալ Աստծուն, Աստված դառնալ, երբ իր մեղքերը անընդհատ աճում են ու գնալով սոսկալի չափերի են հասնում, մինչդեռ դրան հասնելու համար պետք է մարդու գործերի ու վարմունքների, հույզերի ու զգացմունքների աշխարհը իսպառ մաքուր լինեն ամեն տեսակ ապականությունից ու բացասական գծերից: Կատարյալ մաքրության հասնելու համար մարդ պետք է խոստովանի ու անխնա դատապարտի իր գործած մեղքերը: Նարեկացին մի անսահման հիշողությամբ իրեն է վերագրում մեղքեր ու հանցանքներ, դատապարտում այն բոլոր բացասականը, ինչ նա դիտել է մարդկային կյանքում ու իրականության մեջ: Նա գտնում է, որ մարդկային ծնունդներից ոչ ոք իր չափ մեղավոր չի եղել, որովհետև չի կարողացել մտքի երիվարը բանականության սանձով կանգնեցնել, և մութ խորհուրդների միջով սլանալով՝ մարդկանց գործած բոլոր հին

չարիքներին ինքը նորերն է ավելացրել: Նույնիսկ արարչի դեմ միշտ նենգավոր է գտնվել, ըմբոստացել է նրա դեմ, աստվածամարտ մտածումներ է ունեցել ու չի վախեցել նրա սպառնալիքներից: Եվ Նարեկացին սոսկում է ապրում այն գիտակցումից, որ ահռելի մեղքերն իրեն քայլ առ քայլ հեռացրել են կատարելություն Աստծուց, որն արդեն անհասնելի է ու անմատչելի:

Մատյանը հոգու մաքրագործման աղոթք է: մաքրագործման, սրբացման, կատարելագործման այս ճանապարհը, որ ընտրել է Նարեկացին, հոգևոր ճանապարհ է. ամեն մարդ իր աղոթքի մեջ այս զգացողությունն ունի: Նարեկը փրկության գիրք է, ճանապարհ դեպի աստվածային արքայություն: Եվ նարեկացու աղոթքը պարզ է. այն նման չէկրոնական աղոթքներին: Նարեկացին փորձում է բոլոր մեղքերն իրեն վերագրել,

մտնում է բոլորի հոգիների մեջ: Անսահման կատարելության ձգտող Նարեկացու հոգին դառնում է համատարած ձայն, որը նրա էությունը կապում է տիեզերքի անսահմանությանը ու դարձնում հավերժության մասնիկ: Բայց բանաստեղծի խոստովանության ձայնը ունի նաև ներքին անտեսանելի շարժում: Ինչքան մարդը մաքրվում է մեղքերից, և թվում է, թե ուր որ է պիտի հասնի կատարելության, այնքան այդ կատարելությունը իր հերթին ավելի է կատարելագործվում: Տարածությունը մարդու և կատարելության մեջ միշտ մնում է նույնը, բայց նրանք միասնաբար շարժվում ու ձգտում են առավելագույնի: Եվ մարդկության համար միշտ մնում է հավերժական այդ զգացողությունը, այդ ձգտման ուղին:

Չի եթեմ ի լիճ. ծովե՛րը նույնիսկ թանաքի փոխեմ,
Թե բազմասպարեզ դաշտերն իրենց ողջ
Անսահմանությամբ դարձնեմ մագաղաթ
Եվ եղեգների շամբ ու պուրակներն,
անտառներն ամբողջ
Կտրելով միայն գրիչներ շինեմ,
Դաձյալ չեմ կարող բարդված իմ անթիվ անօրենության
Մի չնչին մասնիկն իսկ գրի առնել:
Եթե անգամ ողջ մայրի անտառները Լիբանանի
Ջոդելով դարձնեմ կշեռքի լծակ
Եվ մի նժարին իբրև կշռաքար
Արարատ լեռը դնելու լինեմ,
Դարձյալ չի կարող նա իր ծանրությամբ
Իջնելով հասնել, համազուգակցել ու հավասարվել
Մյուս նժարի հանցանքներիս հետ:

Պոեմում շատ անգամ կործանվելու սարսափներին հաջորդում է փրկվելու հույսը՝ կապված «գործած մեղքերի» ամենադաժան խոստովանության հետ, բայց միշտ ավելի ու ավելի գերադրական աստիճանի բարձրացված, արտահայտչական առավել ուժեղ ու նոր ձևերի մեջ մարմնավորված: Այսպես ստեղծվում է պոեմի արտակարգ հուզիչ, հոգեկան դրամատիկ դրություններով հարուստ ընթացքը, որը, սակայն, պետք է ունենար իր ավարտը: Պոեմը վերջանում է լավատեսության հաղթանակով, փրկության և աստվածային էության հետ միանալու աստվածանալ ու հավատով, բայց այդ միայն այն բանից հետո, երբ անդառնալի կորստյան սարսափը վիթխարի չափերի է հասնում:

Անկասկած, Մատյանի մեջ փրկության հասնելու ճանապարհին ապրած երկվությունը յուրահատուկ կերպով արտացոլում է ժամանակի պատմական-հասարակական իրադրությունը: Դրա ապացույցն է այն, որ Նարեկացին շատ դեպքում էլ իր հոգեկան հանգստությունը արտահայտում է բացահայտ ձևով՝ ուղղակի իրական կյանքի հանգամանքների մեջ պատկերելով իրեն.

Թե զինվոր եմ տեսնում՝ սպասում եմ մահվան.
Թե պատգամավոր՝ խստություն.
Թե գրագիր՝ կորստյան մուրհակի,
Թե կրոնավոր՝անեծքի...
Թե բարձրացած մի ձեռք՝ կկորանամ.
Թե խրտվիլակ փոքրիկ՝ կսարսեմ.
Թե լսեմ թնդյուն մի թեթև, կընդոստնեմ.
Թե կերուխումի հրավեր ստանամ, կդողամ:

Պոեմում շատ անգամ և մեկը մյուսից ծանր «մեղանչումների» հիշատակությունից չի կարելի բանաստեղծի վերաբերյալ կենսագրական եզրակացությունների հանգել, էլ ինչ ծանր հանցանքներ ասես, որ նա չի վերագրում իրեն, բայց այդ պատկերները ճշմարտացիորեն արտացոլում են ֆեոդալական իրականության բոլոր բացասական կողմերը, դրանց նկատմամբ Նարեկացու քննադատական-ժխտական վերաբերմունքը: Նա նրա խորհուրդ ստերի և չարախոս բերանների գործած ամենածանր հանցանքների թվում շատ կարևոր է այն, ինչ վերաբերում է ժամանակաշրջանի հասարակության տարբեր խավերի բարոյական դիմանկարին: Նա բացահայտում է տվյալ դիրքի կամ պաշտոնի մարդկանց բացասական գծերից ամենաէականը՝ նրանց պարտավորության և իրական վարքագծի հակասությունը.

Անխունկ քահանա...
Ենգ խորհրդակից...
Գժտված բարեկամ,
Գողամիտ հսկիչ...
Պաշտոնյա արբշիռ,
Խարդախ գանձապետ,
Բանսարկու դեսպան...
Ենգ ատենապետ,
Մատնիչ պահապան,
Չարախոս դրկից:

Պոեմի գեղարվեստական մեծ արժեքը ամենից առաջ պայմանավորված է ժամանակի իրականության խոր ու ճշմարտացի արտացոլմամբ: Պոեմի քնարական հերոսը ստեղծված է որպես հենց այդ իրականությունը ներկայացնող մարդու մի հոյակապ ու համապարփակ կերպար: Այն, ինչը ամենից առաջ Նարեկացուն դարձնում է նոր շրջանի սկզբնավորողը հայ գրականության մեջ, դա մարդու մասին ունեցած նրա հայացքներն են և մարդկային ներքնաշխարհի արտակարգ հարուստ վերլուծությունները: Նարեկացին սիրում է կյանքը և մարդուն: Նրա մարդկության արատների անխնա մերկացումների իմաստը մարդու ժխտումը չէ, այլ ամեն տեսակետից անթերի ու մաքուր, ողբերգական հակասություններից ու տարակույսներից զերծ մարդկային կերպարի կերտումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լինելով մեր հին գրականության ամենից շատ հրատարակված և հայ ժողովրդի մեջ ամենատարածված գիրքը, իր բազմաթիվ վերնագիր-անվանումների փոխարեն կոչվելով պարզապես «Նարեկ»՝ բանաստեղծության այս արտակարգ և անզուգաբախտ հատորը ոչ այնքան ընթերցվել է, որքան համբուրվել, դրվել ոչ այնքան դարակի կամ գրակալի, որքան հիվանդի ճակատի վրա կամ բարձի տակ, ոչ այնքան հասկացվել, որքան զգացվել, ոչ այնքան գնահատվել, որքան պաշտվել»: Պարույր Սևակ:

Գրիգոր Նարեկացու հոգևոր իդեալը մարդու աստվածացման գաղափարն է, ներքին մարդու մաքրագործության տևական ուղին, որի կարևորագույն օղակը հոգևոր վերառաքման շղթայի մեջ ներքին աղոթքն է: Մատյանի մեջ պատկերված ապրումները՝ հոգեկան տենչանքները, տագնապներն ու տառապանքները, գրեթե ամենուր դրսևորվում են զգացող անհատականության «ես»-ի միջոցով: «Մենք»-ը Նարեկացու երկերում հանդիպում է շատ հազվադեպ, այն էլ համարյա միշտ «ես»-ին զուգադիր: Քրիստոսի մարդեղության հեռանկարը առկա է ի սկզբանե, մի օր կազմավորված էակը ամբողջովին կհամապատասխանի այդ սկզբնատիպին: Այդ իդեալն է ամփոփված իրական եսի հիմքում, որ մարդկային էակը կորցրել է իր գործած մեղքի պատճառով: Եվ միայն աստվածային պատվիրաններին հետևելով և անգամ ճգնակեցությամբ չես կարող հասնել լիովին կատարելության և փրկություն ձեռք չես բերի, եթե մաքուր և կատարյալ չես ներքնապես: Նարեկացին Քրիստոսի մարդեղացման աստվածային խորհրդի հետ է կապում մարդու մաքրագործության, փրկագործության գաղափարը. «…երկրային կյանքում հոգով զարգանալու և կատարելագործվելու համար, որի մեջ էլ նա տեսնում է իրական փրկությունը, մարդը կարիք չի զգում ոչ մի միջնորդության: Յուրաքանչյուր մարդ, իր առջև որպես ուղեցույց ունենալով իդեալական, կատարյալ մարդու՝ Քրիստոսի կերպարը և առաջնորդվելով Նրա պատգամներով՝ իր սեփական ուժերով կարող է հոգով կատարելագործվել և Աստծուն նմանվելով՝մոտենալ անսահման կատարելությանը: Ըստ այդմ էլ՝ Նարեկացու կարծիքով մարդը սկզբունքորեն կարող է դառնալ կատարյալ մարդ՝ մարդ-Աստված: Այսպիսով, մարդն Աստված դառնալու նարեկյան սկզբունքի մեջ դրված է ոչ թե անհատի մեկուսացման միջոցով Աստծու հետ կապի մեջ մտնելու կամ թե աշխարհն ու մարմինը ժխտելով՝ հանդերձյալում Նրան միանալու հարցը, այլ՝ մարմնականի մեջ հոգեկանի զարգացման և կատարելագործման խնդիրը: Եվ դա, ըստ Նարեկացու, մարդկությանը դեպի իրական երջանկությունը տանող միակ ուղին է»: Նարեկացու ստեղծագործություններում և հատկապես Մատյանում է խարսխված մարդու աստվածացման նարեկյան ուրույն ուղին: Միայն հոգու կատարելագործման միջոցով

կարելի է հասնել աստվածացման՝ նախատիպ ունենալով Քրիստոսին: Մարդու միտքը հիմնական ում պետք է գործի և նպաստի հոգու զարգացմանը, ձգտի նմանվել Աստծուն, այս դեպքում՝ Քրիստոսին: Ի մի բերելով ուսումնասիրության արդյունքները՝ պետք է ասել, որ Նարեկացին յուրահատուկ կերպով է ընկալում Քրիստոսին, քանզի Նարեկավանքի սուրբ հայրը աստվածատես է: Անշուշտ, մեր երանելի վարդապետը սեփական աչքերով տեսել է Քրիստոսին, պատարագի ժամանակ զգացել և շոշափել է պատարագվող Տիրոջը և Ս.Հաղորդության միջոցով ընդունել իր մարմնի մեջ՝ միավորվելով Տիրոջ հետ, սակայն, միևնույն է, Գրիգոր Նարեկացու համար Քրիստոս ամբողջովին մնում է անհասկանալի, անպատմելի մի գոյություն: Ինչպես մենք նկատում ենք, Գրիգոր Նարեկացու համար ամենակարևոր պայմանը Քրիստոսի փրկագործող լինելն է, քանզի Քրիստոս, Աստված լինելով հանդերձ, հանձն առավ մարդեղանալ, մահանալ և հարություն առնել՝ փրկելով մարդկությանը: Նկատելի մի փաստ է, որ «Մատյան ողբերգության» ամեն մի տող կարծես պարունակում է Քրիստոսի կենարար արյան մի կաթիլ: Եվ մեզ՝ քրիստոնյաներիս համար, Քրիստոսի արյան կաթիլներն են, որ կենդանացնում են մեղավոր մարդուն, հավերժական կյանք են պարգևում քրիստոնյային, քանզի ով խմում է Քրիստոսի կենարար արյունը և ճաշակում կենարար մարմինը, ապրում է հավիտյան:

Նարեկը հավասարը չունի համաշխարհային գրականության մեջ: Նարեկը միակ գիրքն է, որ իր վրա չի կրել ոչ մի ազդեցություն՝ ո՛չ քաղաքական, ո՛չ տնտեսական: Նարեկացին ասում է, որ ստեղծագործության բնույթն անանձնական է, այն բոլոր փնտրող մարդկանց հավաքական ձայնն է՝ ուղղված առ Աստված: Բանաստեղծը իր մատյանի «ես»-ի անունից մարդուն դեմքով շրջում է դեպի Աստված, պատգամում է

համայն մարդկությանը անդադրում ձգտել կատարելության և կատարելության ձգտումով հավերժանալ ու հորդորում է մարդուն անկեղծ զրույցի բռնվել Բարձրյալի հետ՝ վստահելով Նրան իր զգացմունքները, հույզերն ու հույսերը: բացի այդ՝ Նարեկացին շեշտում է, որ գրքի հեղինակը ոչ թե ինքն է, այլ Աստված, այսինքն՝ գիրքը մարդկային փնտրումների աստվածային արձագանքն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, թրգմ. Մ. Խերանյանի, 1960
2. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, թրգմ. Վ. Գևորգյանի, 1970
3. Ժենյա Քալանթարյան, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի և սաղմոսների առնչությունները, Էջմիածին, 1997
4. Մկրտիչ Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1951
5. Պարույր Սևակ, Գրիգոր Նարեկացի, 1965
6. Սամվել Պողոսյան, Իմ Նարեկացին, Երևան, 2007
7. Տեր Հեթում քահանա Թարվերդյան, Մարդու աստվածացման ուղին ըստ Սուրբ Գրիգոր Նարեկացու, Տարեգիրք, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **2**

“ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ” ՊՈԵՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ **4**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ **13**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ **15**